ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

<< >> _____ 2018թ.

N: _____

ՈՒՂԵՐՁ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ մայրեր, սիրելի՛ կանայք և քույրեր.

Ջերմորեն շնորհավորում եմ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ: Գարնանային այս տոնը լավագույն առիթ է կրկին ցույց տալու մեր անսահման սերն ու հարգանքը Ձեր նկատմամբ, մեծարելու Ձեզ, կարևորելու կանանց բացառիկ դերը մեր հասարակության մեջ:

Հայ կինը միշտ եղել է հայ օջախի և ընտանիքի ամրության խորհրդանիշը, մեր դարավոր ավանդույթների կրողը, մատաղ սերնդին հայեցի դաստիարակողը: Դժվարին պահերին հայ կինն է կանգնել տղամարդու կողքին, ոգևորել ու քաջալերել նրան, կիսել և դառնություն և վիշտ, սակայն երբեք չի կորցրել հոգու վեհությունն ու կանացիությունը:

Սիրելի՛ կանայք, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, խաղաղ կյանք, մայրության բերկրանք և գարնանային բարձր տրամադրություն:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ